ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
Խմբագրական խորհուրդ՝
Արման Եղիազարյան (խմբագիր, պ.գ.դ., դոց.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Իգիթ Ղարիբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:
Арман Егиазарян (редактор, д.и.н., доц.), **Арам Симонян** (директор Института Арменоведческих исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Артак Мовсисян** (д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Игит Гарибян** (д.и.н., проф.), **Генрих Абраамян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:
Arman Yeghiazaryan (editor, Doctor of Sciences, associate prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD of History, associate prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Էդիկ Մինասյան – ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳՈՐԾՈՒՄ (1941-1945 ԹԹ.) 8

***Эдик Минасян** – ВКЛАД АРМЯНСКОГО НАРОДА В ПОБЕДУ В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ (1941-1945 ГГ.).* 32

***Edik Minasyan** – THE CONTRIBUTION OF THE ARMENIAN PEOPLE TO THE VICTORY IN THE WORLD WAR II (1941-1945).* 33

Արտակ Մովսիսյան – ՀԱՅ ԷԹՆՈՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲԻՆ (ԸՍՏ ՍՏՐԱԲՈՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) 34

***Артак Мовсисян** – ГЕОГРАФИЯ РАСПРОСТРАНЕНИЯ АРМЯНСКОГО ЭТНОСА НАКАНУНЕ НАШЕЙ ЭРЫ (ПО СВЕДЕНИЯМ СТРАБОНА)* 40

***Artak Movsisyan** – THE GEOGRAPHY OF THE SPREAD OF THE ARMENIAN ETHNOS ON THE EVE OF OUR ERA (ACCORDING TO STRABO)* 40

Միքայել Մալխասյան – ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԸՍՏ ԿԼԱՎԴԻՈՍ ՊՏՂՈՄԵՈՍԻ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ» 41

***Микаэл Малхасян** – ЗАПАДНЫЕ ГРАНИЦЫ ВЕЛИКОЙ АРМЕНИИ ПО "ГЕОГРАФИИ" КЛАВДИЯ ПТОЛЕМЕЯ.* 47

***Mikayel Malkhasyan** – THE WESTERN BORDERS OF GREATER ARMENIA IN CLAUDIUS PTOLEMY'S "GEOGRAPHY".* 47

Էդգար Վարշամյան – ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՌՈՄԵԱ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԾԻՐՈՒՄ. ԱՐՇԱԿ Բ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 49

***Эдгар Варшамян** – АРМЕНИЯ В РАЗГАР РИМСКО-ПЕРСИДСКОГО КОНФЛИКТА: ВНЕШНЯЯ ПОЛИТИКА АРШАКА II.* 60

***Edgar Varshamyan** – ARMENIA IN THE MIDST OF THE ROMAN-PERSIAN CONFLICT: THE FOREIGN POLICY OF ARSHAK II.* 61

Արգիշտի Վարդանյան – ՄԱՆՎԵԼ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱԿԱԼ ԵՎ ԿԱՌԱՎԱՐԻՉ 62

***Аргишти Варданян** – МАНВЕЛ МАМИКОНЯН – РЕГЕНТ И УПРАВЛЯЮЩИЙ ЦАРСТВОМ ВЕЛИКОЙ АРМЕНИИ.* 68

***Argishti Vardanyan** – MANVEL MAMIKONYAN – REGENT AND RULER OF THE KINGDOM OF GREATER ARMENIA.* 68

Արման Եղիազարյան – ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՌԱԿՏՄԱՆ ՊԱՏՃԱՌ ԴԱՐՁԱԾ ՄԻ ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 70

***Арман Егиазарян** – О ЗАГОВОРЕ, ПРИВЕДШЕМ К РАСКОЛУ БАГРАТИДСКОГО ЦАРСТВА.* 79

***Arman Yeghiazaryan** – ON A CONSPIRACY THAT CAUSED THE SPLIT OF THE BAGRATUNIES KINGDOM.* 79

Արարատ Ստեփանյան – ՓԻԼԱՐՏՈՍ ՎԱՐԱԺՆՈՒՆՈՒ ՊԱՏՎԱՏԻՏՂՈՍՆԵՐԸ 81

***Арарат Степанян** – ПОЧЕТНЫЕ ТИТУЛЫ ФИЛАРЕТА ВАРАЖНУНИ.* 86

***Ararat Stepanyan** – THE HONORARY TITLES OF PHILARETOS BRACHAMIOS.* 86

Սեյրան Զաքարյան – ԱԶԳԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ (ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ ԵՎ ՂԱԶԱՐ ՋԱՀԿԵՑԻ).....88

***Сейран Закарян** – ПРОБЛЕМА ХАРАКТЕРИСТИКИ НАЦИИ В ХРИСТИАНСКОЙ ПАРАДИГМЕ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ (ГРИГОР ТАТЕВАЦИ И ГАЗАР ДЖАХКЕЦИ).*.....97

***Seyran Zakaryan** – THE PROBLEM OF CHARACTERIZATION NATION IN THE CHRISTIAN PARADIGM OF ARMENIAN IDENTITY (GRIGOR TATEVATSI AND GHAZAR JAHKETSI).*.....98

Սարգիս Բալդարյան – ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ-ՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՑԱՆՑՈՒՄ.....99

***Саркис Балдарян** – ЦИРКУЛЯЦИЯ КОММЕРЧЕСКИХ УЧЕБНИКОВ КОНСТАНТА ДЖУГАЕЦИ В ТОРГОВОЙ СЕТИ НОВОЙ ДЖУЛЬФЫ.*..... 106

***Sargis Baldaryan** – THE CIRCULATION OF COMMERCIAL HANDBOOKS OF CONSTANT OF JULFA IN THE TRADE NETWORK OF NEW JULFA.* 106

Արարատ Հակոբյան – 1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿՍՄԱՆ ՕՐՎԱ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (ՊԱՏԵՐԱԶՄԻ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ)..... 108

***Арарат Акопян** – К ВОПРОСУ О ДАТЕ НАЧАЛА ТУРЕЦКО-АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1920 Г. (К 100-ЛЕТИЮ ВОЙНЫ).*..... 117

***Ararat Hakobyan** – ABOUT THE DATE OF THE BEGINNING OF THE TURKISH-ARMENIAN WAR IN 1920 (TO THE 100TH ANNIVERSARY OF THE WAR).*..... 117

Նելլի Մինասյան – 1920 ԹՎԱԿԱՆԻ ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՄԱ-ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ..... 118

***Нелли Минасян** – ТУРЕЦКО-АРМЯНСКАЯ ВОЙНА 1920 ГОДА И ПЛАНЫ ПАН-ТЮРКИЗМА.* 123

***Nelli Minasyan** – THE TURKISH-ARMENIAN WAR OF 1920 AND THE PROGRAMS OF PAN-TURKİSM.*..... 123

Սուրեն Ավետիսյան – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒ-ԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ..... 124

***Сурен Аветисян** – ДЕЯТЕЛЬНОСТЬ ОБЩЕСТВА КРАСНОГО КРЕСТА АРМЕНИИ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.* 131

***Suren Avetisyan** – THE ACTIVITY OF RED CROSS SOCIETY OF ARMENIA IN THE YEARS OF THE GREAT PATRIOTIC WAR.* 131

Առնակ Սարգսյան – ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈ-ՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ՀՀ 2018 Թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻ-ՆԱԿՈՎ)..... 132

***Арнак Саргсян** – УЧАСТИЕ В ИЗБИРАТЕЛЬНОМ ПРОЦЕССЕ В РЕАЛИЯХ ДЕМО-КРАТИЗАЦИИ (НА ПРИМЕРЕ ВЫБОРОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ В 2018 Г.).* 139

***Arnak Sargsyan** – PARTICIPATION IN THE ELECTORAL PROCESS IN THE REALITIES OF DEMOCRATIZATION (ON THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARMENIA IN 2018 ELECTIONS).*..... 139

Գայանե Թովմասյան, **Ռուբիկ Թովմասյան** – ՁԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՅՈՒՐԸՆ-ԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ (ԱՇԽԱՐՀ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ)..... 140

***Гаяне Товмасян**, **Рубик Товмасян** – БУДУЩИЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ТУРИЗМА И ИНДУСТРИИ ГОСТЕПРИИМСТВА В МИРЕ И В АРМЕНИИ.*..... 149

Gayane Tovmasyan*, *Rubik Tovmasyan *– FUTURE TRENDS OF TOURISM AND HOSPITALITY INDUSTRY DEVELOPMENT IN THE WORLD AND IN ARMENIA.* 149

Արշալույս Տետեյան – ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱՁԵՎԵՐՈՒՄ 150

Аршалуйс Тетеян *– ВОПРОС ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН И ПРОБЛЕМА НАГОРНОГО КАРАБАХА В РЕЗОЛЮЦИЯХ ЕВРОПЕЙСКОГО ПАРЛАМЕНТА.* 156

Arshaluys Teteyan *– RECOGNITION OF ARMENIAN GENOCIDE AND NAGORNO-KARABAKH PROBLEM IN THE RESOLUTIONS OF EUROPEAN PARLIAMENT.* 156

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ռաֆիկ Նահապետյան – ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ՝ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԿԵՆՏՐՈՆ (ԸՍՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԱՆՏԻԿ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ) 157

Рафик Наапетян *– АРМЯНСКОЕ НАГОРЬЕ - ДРЕВНЕЙШИЙ ЦЕНТР СКОТОВОДЧЕСКОЙ КУЛЬТУРЫ (ПО АРХЕОЛОГИЧЕСКИМ МАТЕРИАЛАМ И АНТИЧНЫМ ПИСЬМЕННЫМ ИСТОЧНИКАМ).* 162

Rafik Nahapetyan *– ARMENIAN HIGHLAND - THE MOST ANCIENT CENTRE OF CATTLE BREEDING CULTURE (ACCORDING TO ARCHAEOLOGICAL MATERIALS AND ANCIENT WRITTEN SOURCES).* 162

Քրիստինա Այվազյան – ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ 163

Кристина Айвазян *– БЛАГОТВОРИТЕЛЬНОСТЬ В АРМЯНСКИХ НАРОДНЫХ СКАЗКАХ.* 174

Christina Ayvazyan *– CHARITY IN THE ARMENIAN FAIRY TALES.* 175

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Գեղամ Ասատրյան, **Ավետիս Գրիգորյան** – ՄԱՔՐԱՎԱՆՔԻ ԽԱՉՔԱՐԵՐԸ (XII-XIV ԴԴ.) 176

Гегам Асатрян*, *Аветис Григорян *– ХАЧКАРЫ МАКРАВАНКА (XII-XIV ВВ.).* 181

Gegham Asatryan*, *Avetis Grigoryan *– THE CROSSTONES OF MAKRAVANK (XII-XIV CENTURIES).* 181

Մոնթե Մաթևոսյան – ՋՐԱՌԱՏԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՉՔԱՐԵՐԸ 185

Монте Матевосян *– ХАЧКАРЫ ЦЕРКВИ СВЯТОГО КАРАПЕТА В ДЖРАРАТЕ.* 188

Monte Matevosyan *– THE KHACHKARS OF JRARAT ST. KARAPET CHURCH.* 188

Շուշանիկ Համբարյան – ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Հ[մր] 1970 ԱՎԵՏԱՐԱՆԸ ԵՎ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԻ ՈՒՇ ՇՐՋԱՆԻՆ ԲՆՈՐՈՇ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 191

Шушаник Амбарян *– РУКОПИСЬ № 1970 ЕВАНГЕЛИЯ ИЕРУСАЛИМА И ИКОНОГРАФИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ МИНИАТЮР, ХАРАКТЕРНЫЕ ДЛЯ ПОЗДНЕГО ПЕРИОДА.* 199

Shushanik Hambaryan *– № 1970 GOSPEL OF JERUSALEM AND THE ICONOGRAPHIC FEATURES OF THE MINIATURES CHARACTERISTIC OF THE LATE-PERIOD.* 199

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Հրաձին Վարդանյան – ՍՓՅՈՒՌՔԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՍՓՅՈՒՌՔԸ..... 202
Грацин Варданян *– ТИПОЛОГИЯ ДИАСПОРЫ И АРМЯНСКАЯ ДИАСПОРА.* 207
Hratsin Vardanyan *– TYPOLOGY OF DIASPORAS AND THE ARMENIAN DIASPORA.* 208

Ալիկ Ղարիբյան, **Գայանե Գալստյան** – ՀՅԴ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԱՄՆ-ՈՒՄ 209
Алик Гарибян, ***Гаяне Галстян*** *– НАЧАЛО ДЕЯТЕЛЬНОСТИ АРФ ДАШНАКЦУТЮН В США.* 214
Alik Gharibyan, ***Gayane Galstyan*** *– THE BEGINNING OF ARF DASHNAKTSUTYUN ACTIVITY IN THE USA.* 215

Էդգար Հովհաննիսյան – ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱԿՆՈՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ 216
Эдгар Ованесян *– СОЗДАНИЕ ВОСКРЕСНЫХ ШКОЛ КИЛИКИЙСКОГО КАТОЛИКОСАТА И ИХ РОЛЬ В СОХРАНЕНИИ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ.* 225
Edgar Hovhannisyan *– THE FOUNDATION OF SUNDAY SCHOOLS OF THE CATHOLICOSATE OF THE GREAT HOUSE OF CILICIA AND THEIR ROLE IN PRESERVATION OF THE ARMENIAN IDENTITY.* 225

Մարիամ Հակոբյան – ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈՒՆԱՀԱՅՈՑ ԹԵՄԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ. 226
Мариам Акопян *– ФОРМИРОВАНИЕ ЕПАРХИЙ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ В ГРЕЦИИ И ИХ АДМИНИСТРАТИВНО-ДЕМОГРАФИЧЕСКОЕ ОПИСАНИЕ В 1920-1930-Х ГГ.* 231
Mariam Hakobyan *– THE FORMATION OF THE GREEK-ARMENIAN DIOCESES OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH AND THEIR ADMINISTRATIVE-DEMOGRAPHIC DESCRIPTION IN THE 1920s AND 1930s.* 231

Նարինե Նուշերվանյան – «ՍՓՅՈՒՌՔ-ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ԵՐԿԻՐ-ՀԱՅՐԵՆԻՔ» ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՌԱՆԿՅՈՒՆԱՁԵՎ ՄՈԴԵԼԸ 232
Нарине Нушерванян *– ТРЕХСТОРОНЯЯ МОДЕЛЬ ВЗАИМООТНОШЕНИЙ "ДИАСПОРА-ПРИНИМАЮЩАЯ СТРАНА-РОДИНА".* 240
Narine Nushervanyan *– "DIASPORA-HOST COUNTRY-HOMELAND" TRIANGULAR MODEL OF RELATIONS.* 241

Գևորգ Ղուկասյան – ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԼՈԲԲԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 242
Геворг Гукасян *– О ЛОББИСТСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ В ЗАПАДНОЙ ЕВРОПЕ.* 250
Gevorg Ghukasyan *– ON THE LOBBYING ACTIVITIES OF THE ARMENIAN DIASPORA IN WESTERN EUROPE.* 251

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

Հայկազ Հովհաննիսյան, **Կարեն Բայրամյան** – ՆՈՐԱՀԱՅՏ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԼԱՉԱՐՅԱՆՆԵՐԻ ԱՐԽԻՎԻՑ 252

Айказ Оганесян, Карен Байрамян *– НОВОВЫЯВЛЕННЫЕ ДОКУМЕНТЫ ИЗ АРХИВА ЛАЗАРЕВЫХ.* 261

Haikaz Hovhannisyan, Karen Bayramyan *– NEWLY REVEALED DOCUMENTS FROM THE LAZAREVS ARCHIVE.* 261

Հովիկ Գրիգորյան, Հայկ Մխոյան – ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԵՎ ԼԵՈՅԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ 262

Овик Григорян, Айк Мхоян *– ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА И ЛЕО.* 273

Hovik Grigoryan, Haik Mkhoyan *– FROM THE LETTERS OF DAVID ANANUN AND LEO.* 274

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Արա Հովհաննիսյան – ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ (ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ) 275

Ара Оганесян *– УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЕ ПРИНЦИПЫ И ОСОБЕННОСТИ КУРСА “ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ”.* 281

Ara Hovhannisyan *– EDUCATIONAL AND METHODOLOGICAL PRINCIPLES AND FEATURES OF THE COURSE “HISTORY OF ARMENIAN DIASPORA”.* 282

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW

Կարինե Եղիազարյան, Մերի Հովհաննիսյան. ЭДИК МИНАСЯН – ГЕРОИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНОК В ГОДЫ ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ КОНЦА XIX–НАЧАЛА XX ВЕКА, МОСКВА, «ЭДИТУС», 2020, 252 С 283

Էդիկ Մինասյան, Էդիկ Զոհրաբյան. ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՍԿԻԶԲԸ (1956 Թ. ՓԵՏՐՎԱՐ – 1991 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ), Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2019, 398 ԷՋ 286

Վալերի Թունյան, Արա Հովհաննիսյան. «ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ, ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ», ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ /ԿԱԶՄՈՂ Է. ՄԻՆԱՍՅԱՆ/, Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2020, 212 ԷՋ 288

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 290

INFORMATION ABOUT THE AUTHORS 292

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 294

NOTICE FOR THE AUTHORS 294

Էդգար Հովհաննիսյան

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱԿՆՈՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հիմնաբառեր. *Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսություն, Անթիլիաս, կիրակնօրյա դպրոցներ, հայկական սփյուռք, Սիրիա-Լիբանանի հայկական համայնքներ, հայապահպանություն, կրթություն:*

ՄՈՒՏՔ

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության սփյուռքյան շրջանի գործունեության գլխավոր առաքելություններից մեկը ոչ միայն տարագիր հայությանը հոգևոր-կրոնական ծառայություններ մատուցելն էր, այլ նաև ջանքերը հայապահպանության ուղղությամբ: Սփյուռքում հայապահպանության և ազգապահպանության համար կարևոր էր ոչ միայն ազգային կրթությունը, այլև դաստիարակությունը՝ հիմնված քրիստոնեական հոգևոր արժեհամակարգի հիման վրա: Կիլիկիո կաթողիկոսությունում լավ էին հասկանում, որ օտար հողում ազգային նկարագիրը ամուր պահելու համար խիստ կարևոր է ընտանքի դերը և մատաղ սերնդի բարոյական դաստիարակությունը: «Ընտանեկան կեանքի սրբափայլ, կրօնասերտ գեղեցկութիւնը բծաւորուելու վրայ է դժբախտաբար»[1],– այսպես է արտահայտում իր մտահոգությունը խնդրի վերաբերյալ «Հասկ»-ի առաջնորդողը 1932 թ. համարներից մեկում: Անթիլիասի համար սերնդի դաստիարակության խնդիրը ապագային միտված և հեռուն տանող խնդիր էր, քանզի «Այսօրուա պատանութիւնն է որ պիտի կազմէ վաղուան ժողովուրդը»[2]:

ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱԿՆՈՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄԸ

Կիլիկիո կաթողիկոսությունը այս խնդրի լուծումը տեսնում էր նախ և առաջ կրոնական դաստիարակության միջոցով: «Մեր դպրոցներուն մէջ պէտք է կարեւորութիւն տրուի կրօնական դաստիարակութեանը: Վասն զի մեր դպրոցներու ուսմանց ծրագրին մէջ ամէնէն յետին տեղը տրուած է Կրօնքի ուսման»[3],– գրում է «Հասկը» կրոնական դատիարակության հարցի վերաբերյալ՝ միաժամանակ նշելով, որ կրոնական դաստիարակություն պահանջելով՝ Կիլիկիո կաթողիկոսությունը ի նկատի չունի հայկական դպրոցները վերածել աստվածաբանական դպրոցների. «Բաւական չէ Հին եւ Նոր Կտակարաններէն քանի մը պատմութիւններ սորվեցնել տղոց: Այլ պէտք է դաստիարակել զանոնք կրօնքի բարոյականով»[4]: Մատաղ սերնդի կրոնական դաստիարկությունը պետք է տրվեր ոչ միայ ազգային դպրոցների միջոցով, այլև խնդիր էր դրվում Կիլիկիո աթոռի հովանու ներքո վերջինիս ենթակա բոլոր թեմերում բացել կիրակնօրյա դպրոցներ: 1930 թ. Անթիլիասում հաստատվելուց հետո այդ ուղղությամբ գործելու հնարավորություններն ավելի առարկայական դարձան:

Առաջին կիրակնօրյա դպրոցները[5] աշխարհում բացվել են՝ 1780 թ. Մեծ Բրիտանիայի Գլոսթեր քաղաքում՝ տեղի շաբաթաթերթերից մեկի խմբագիր Ռոբերտ Ռեյքսի կողմից, որից հետո դրանք արագորեն տարածվել են տարբեր երկրներում[6]:

---

* *Հոդվածը ներկայացվել է 09.04.2020 թ., գրախոսվել՝ 25.05.2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.06.2020 թ.:*

[1] *«Հասկ», ապրիլ, 1932, թիվ 4:*

[2] *Նույն տեղում:*

[3] *Նույն տեղում, հունիս, հուլիս, օգոստոս, 1936, թիվ 6-7-8:*

[4] *Նույն տեղում:*

[5] *Եվրոպայում և Ամերիկայում կիրակնօրյա դպրոցների գործունեության առանձնահատկությունների մասին տե՛ս «Սիոն», Երուսաղեմ, մայիս, թիվ 5, 1931, էջ 138-140:*

[6] *Տե՛ս «Սիոն», Երուսաղեմ, թիվ 5, մայիս, 1931, էջ 138, տե՛ս նաև Հարությունյան Ն., Լիբանանի և Սիրիայի հայկական դպրոցները, Ե., 2002, էջ 54-55:*

1928 թ. Լոս-Անջելեսում գումարված Աշխարհի Կիրակնօրյա դպրոցների ընկերակցության տվյալների համաձայն աշխարհի տարբեր հատվածներում գործում էր 320.620 կիրակնօրյա դպրոց[1]:

Բյուզանդ Եղիայանի վկայությամբ առաջին կիրկնօրյա դպցրոցը բացվել էր դեռևս 1923 թ. Հալեպում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ-ի թույլտվությամբ[2]: Սակայն այն տարածում չէր ունեցել մյուս թեմերում: Կրկին կիրակնօրյա դպրոց բացելու գաղափարը ի հայտ է գալիս 1927 թ. Հալեպի ազգային առաջնորդարանի Կրոնական ժողովում: Նախապատրաստական աշխատանքները մեկնարկում են 1929 թ. հուլիսին և արդեն դեկտեմբերին տեղի է ունենում դրա պաշտոնական բացումը Հալեպի ազգային մանկապարտեզի սրահում՝ Հալեպի թեմի առաջնորդ Արտավազդ ծ. վարդապետ Սուրմեյանի և Լևոն Զենյանի կողմից[3]: Կարճ ժամանակում հարյուրավոր աշակերտներ արձանագրվում են նորաբաց կիրակնօրյա դպրոց հաճախելու համար: Սա ցույց է տալիս նման հաստատությունների խիստ անհրաժեշտությունը սփյուռքահայության շրջանում: 1930-ական թթ. սկզբներից արդեն այդ դպրոցները համակարգված ձևով բացվում են հայաշատ տարբեր գաղութներում:

Անթիլիասի հովանու ներքո գործող Կիրակնօրյա դպրոցների բացումը մեծապես կապված է ամերիկաբնակ հայազգի մտավորական, գործիչ Լ. Զենյանի հետ: Վերջինս սերտ կապեր ուներ «Կիրակնօրյա դպրոցների համաշխարհային միության» ներկայացուցիչների հետ: 1929 թ. փետրվարին Սահակ Բ-ին ուղղված նամակում ՀԲԸՄ Ամերիկայի Շրջանային հանձնաժողովի վարիչ-քարտուղար Վահան Քյուրքճյանը առաջարկում է Անթիլիասի հովանու ներքո հիմնել կիրակնօրյա դպրոցներ և դրանց կազմակերպման գործը վստահել «Ազգային Եկեղեցւոյ զավակ» Լ. Զենյանին[4]: Պատահական չէր «Ազգային Եկեղեցւոյ զավակ» շեշտադրումը, քանի, որ թեև Լ. Զենյանը ոչ վաղ անցյալում Սահակ Բ-ի թույլտվությամբ ԱՄՆ-ում սարկավագ էր ձեռնադրվել, սակայն վերջինիս կողմից կիրակնօրյա դպրոցներ հիմնելու ձեռնարկի նկատմամբ սկզբնական շրջանում որոշակի վերապահումներ կային: Թե՛ Սահակ Բ-ի, թե՛ Երուսաղեմի Եղիշե պատրիարքի և թե՛ Բաբկեն եպիսկոպոսի (ապագա աթոռակից կաթողիկոս) մոտ որոշակի մտավախություններ կային նմանատիպ դպրոցների միջոցով հայության շրջանում այլ դավանական ուղղությունների ազդեցության տարածելու առումով: Սա միանգամայն բնական անհանգստություն էր՝ հաշվի առնելով օտար միջավայրում ինքության պահպանմանն ուղղված մարտահրավերները և այն սուր մրցակցությունը, որն առկա էր Հայոց եկեղեցու և հայկական քրիստոնեական մյուս դավանական ուղղությունները ներկայացնող կառույցների միջև:

Սկզբնական շրջանում կիրակնօրյա դպրոցների նկատմամբ վստահությունը մեծ չէր նաև ժողովրդի մոտ և շատերը այն նույնացնում էին տարբեր միսիոներների կողմից հայության շրջանում հիմնված նմանատիպ ուսումնական հաստատությունների հետ: Այդ էր պատճառը, որ 1929 թ. հունիսի Բաբկեն Կյուլեսերյանը Երուսաղեմից նամակով դիմում է Սահակ Բ-ին հետևյալ խնդրանքով. «Պիտի խնդրեմ, որ Ձեր օրհնաբաշխ կոնդակով Տիար Լեւոն Զէնեանը յանձնարարէք Սիւրոյ մէջ Կիլիկիոյ կաթողիկոսութեան թեմական առաջնորդներուն եւ Եկեղեցիներուն, որպէս զի գիտնան որ Կիրակնօրեայ Դպրոցներու կազմութիւնը Ձեր գիտութեամբ եւ հրամանով է պիտի ընէ Զէնեան, որ հարազատ որդին է Հայոց Եկեղեցւոյ, որ պիտի գործադրէ այն ծրագիրը զոր մենք պիտի պատրաստենք հոս, վերջապէս Զէնեան ո՛չ բողոքական է, ո՛չ ալ գործիք «Միսիոներական էնթրիկներու...»[5]: 1930 թ. գարնանը նույնիսկ Հալեպում տարածվում է «Առ որ անկ է» խորագրով մի սպառնագիր ընդդեմ կիրակնօրյա դպրոցների՝ ուղղված կաթողիկոսին, թեմական առաջնորդին և ազգային իշխանություններին[6]: Այդ մասին Սահակ Բ-ն տեղեկացնում է Բաբկեն

[1] Տե՛ս «Սիոն», Երուսաղեմ, թիվ 6, հունիս, 1931, էջ 173:

[2] Տե՛ս Եղիայան Բ., Ժամանակակից պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972, Անթիլիս, 1975, էջ 432:

[3] Տե՛ս «Եփրատ», Հալեպ, թիվ 266-268, փետրվարի 22, փետրվարի 26, մարտի 1, 1930:

[4] Տե՛ս Եղիայան Բ., նշվ. աշխ., էջ 432:

[5] Կիլիկիոյ կաթողիկոսութեան արխիւներ, թիւ 1, Թղթակցութիւն Սահակ Ա. եւ Բաբգէն Բ. Կաթողիկոսներու, Անթիլիաս, 1999, էջ 202:

[6] Տե՛ս Եղիայան Բ., նշվ. աշխ., էջ 434:

եպիսկոպոսին, որը կողմ էր այդ դպրոցների բացմանը և մեծ դերակատարում ունեցավ այդ հարցում: Ահա այս իրադարձություններից հետո է, որ հրապարակվում է Սահակ Բ-ի կոնդակը, որով պաշտոնապես հռչակվում էր, որ կիրակնօրյա դպրոցները գործելու են Հայոց եկեղեցու վարչական իրավասության ներքո: Այս ամենից հետո, Բաբկեն Կյուլեսերյանը, այնուամենայնիվ, որպեսզի վերջնականապես հավաստիանա, որ կիրակնօրյա դպրոցների տեսչությունը վստահելի ձեռքերում է, «...Երուսաղէմ իր քով կը կանչէ Լեւոն Զէնեանը եւ՝ վանքին մէջ հետը ամէնօրեայ հանդիպումով՝ անձնապէս անոր առանձին դաս կու տայ հայերէն գրաբարի եւ եկեղեցագիտութեան, չորս ամիսներու տեւողութեամբ, մինչեւ իր վերջնական մեկնումը Երուսաղէմէն Անթիլիաս»[1]: Սրբազան հոր այս քառամսյա դասերը անշուշտ կարևոր ազդեցություն ունեցան Լ. Զենյանի հետագա գործունեության մեջ և վերջինս, ավելի քան մեկ տասնամյակ ղեկավարելով Կիլիկիո կաթողիկոսության կիրակնօրյա դպրոցները, ապացուցեց, որ նվիրյալ զավակն է Հայոց եկեղեցու և կատարեց իրենից կախվածը նոր սերնդի հայեցի և բարոյական դաստիարակության գործում:

Մերձավոր Արևելքի քրիստոնյաների շրջանում կիրակնօրյա դպրոցների տարածման նախաձեռնությունը գալիս է «Կիրակնօրյա դպրոցի համշխարհային ընկերության» կողմից, որը տեղում իրավճակը ուսումնասիրելու համար պատգամավորություն է ուղարկում Մերձավոր Արևելք: Այդ պատգամավորությունը ղեկավարում էր նշված ընկերության ընդհանուր քարտուղար Ռոբերտ Հոպկինսը: Պատգամավորության մեջ, ի թիվս մի շարք այլ ներկայացուցիչների, ընդգրկված էր նաև Լ. Զենյանը[2]: Այս պատգամավորությունը հանդիպումներ է ունենում Եգիպտոսի հայոց առաջնորդ Թորգոմ սրբազանի, Երուսաղեմի հայոց պատրիարք Եղիշե Դուրյանի, իսկ 1929 թ. ապրիլի 7-ին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ-ի հետ: Հանդիպումների ընթացքում հայոց եկեղեցու հոգևոր պետերը նախ փորձում են հասկանալ նման հաստատությունների հիմնելու նպատակները, վերջանականապես փարատվում է նաև այն կասկածը, որ վերջիններս ունեին այդ կառույցների նկատմամբ: Պատգամավորության անդամները տեղեկացնում են, որ իրենց նպատակն է ստեղծել կիրակնօրյա դպրոցներ «...Նեղոսէն մինչեւ Տիգրիս քրիստոնեայ ժողովուրդներու մէջ» և, որ այդ նպատակով Բեյրութում արդեն ստեղծվել է հատուկ մարմին՝ «Սուրբգրական երկրներու Կիրակնօրեայ Դպրոցներու Միութիւնը»[3]: Նշված հանդիպումների և քննարկումների ընթացքում մշտապես ընդգծվում է հատկապես «Հայ Եկեղեցւոյ կարգ-կանոնին ենթակայ եւ անոր սկզբունքներուն եւ աւանդութեանց համաձայն» կիրակնօրյա դպրոցներ ստեղծելու հանգամանքը[4], իսկ Երուսաղեմի հայոց պատրիարք Եղիշե սրբազանի հետ հանդիպման ժամանակ Լ. Զենյանը հավաստիացնումը է, որ վերջինս կիրակնօրյա դպրոցների համար որևէ նախնական կրթական ծրագիր չունի և այն պետք է պատրաստի «...Մայրենի եկեղեցւոյ հոգեւոր իշխանութեան հետ խորհրդակցելով եւ ինքզինք կը դնէ անոր տրամադրութեան տակ»[5]:

Զեռնարկված այս քայլերից հետո աստիճանաբար մտավախությունները փարատվում են նաև ժողովրդի շրջանում և պարզ է դառնում, որ կիրակնօրյա դպրոցների գլուխ կանգնած է Հայոց առաքելական եկեղեցին և դրանց գործունեությունը իրականացվում է ի նպաստ հայության:

1929 թ. ապրիլի 8-14-ը Լիբանանի Բաալբեք քաղաքում տեղի է ունենում «Կիրակնօրյա դպրոցների համաշխարհային միության» համաժողովը[6], որը կրում էր «Սուրբգրական երկրներու Միութիւն»[7] խորագիրը: Համաժողովին մասնակցում է նաև Հայոց եկեղեցու պատվիրակությունը՝ ի դեմս Կիլիկիո կաթողիկոսության և Երուսաղեմի պատրիարքության ներկայացուցիչների: Հայկական պատվիրակության մեջ էին ընդգրկված Բաբկեն եպիսկոպոս Կյուլեսերյանը, Արտավազդ ծ.վարդապետ Սուրմեյանը և Զահլեի հոգևոր հովիվ Դիոնիս քահանա Տրեզեյանը[8]: Հա-

---

[1] Եղիայան Բ., նշվ. աշխ., էջ 435:

[2] Տե՛ս «Սիոն», Երուսաղեմ, թիվ 5, մայիս,1929, էջ 159-160:

[3] Նույն տեղում, էջ 160:

[4] Տե՛ս Եղիայան Բ., նշվ. աշխ., էջ 434:

[5] «Սիոն», Երուսաղեմ, թիվ 5, մայիս, 1929, էջ 160:

[6] Տե՛ս Կիլիկիոյ կաթողիկոսութեան արխիւներ, թիւ 1, Թղթակցութիւն ..., էջ 184:

[7] Տե՛ս «Սիոն», Երուսաղեմ, թիվ 5, մայիս, 1929, էջ 160:

[8] Տե՛ս նույն տեղում, էջ 160; տե՛ս նաև Յուշամատեան նուիրուած Կիրակնօրեայ դպրոցներու 35-ամեակին եւ ՀԵԿԴՕՄ-ի 15-ամեակին, 1929-1950-1965, Պեյրութ, 1967, էջ 100:

մաժողովին մասնակցում էին նաև հայկական տարբեր դավանական ուղղություններին պատկանող եկեղեցիների ներկայացուցիչները: Բաբկեն եպիսկոպոս Կյուլեսերյանը համաժողովի նիստերից մեկում հանդես է գալիս որպես գլխավոր զեկուցող՝ ներկայացնելով «Սուրբ գրքի ուսուցումը եւ կրօնական դաստիարակութիւնը Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ»[1] թեման: Համաժողովին ելույթով հանդես է գալիս նաև Արտավազդ ծ. վարդապետը[2]: Վերջինս իր ելույթում հույս է հայտնում, որ Համաշխարհային Կիրակնօրյա դպրոցների ընկերության կողմից հայոց եկեղեցուն և մյուս արևելյան քրիստոնեական եկեղեցիներին ցուցաբերված այդ օժանդակությունը. «...քրիստոնէական սիրոյ պէս մաքուր և անշահախնդիր օժանդակութիւն մըն է, զե՛րծ եկամուտ շինելու գաղտնի միտքերէն»[3]: Համաժողովում հաստատվում է, որ տարածաշրջանում գործող քրիստոնեական եկեղեցիները պետք է կիրակնօրյա դպրոցներ հիմնեն. «...իւրաքանչիւր Եկեղեցի իր բնիկ աւանդական ուղղութեամբ»[4]: Նշենք նաև, որ հետագայում և՛ս Կիիկիո կաթողիկոսությունը ակտիվ մասնակցում էր կիրկնօրյա դպրոցներին նվիրված միջազգային համաժողովներին: 1931 թ. օգոստոսի 11-16-ը Անթիլիասի Դպրեվանքի վերատեսուչ Շահե եպիսկոպոս Գասպայանը որպես Անթիլիասի ներկայացուցիչ մասնակցում է Բուդապեշտում տեղի ունեցած Կիրակնօրյա վարժարանների եվրոպական առաջին համագումարին[5]:

Այս ամենից հետո Սահակ Բ-ն, խորհրդակցելով Երուսաղեմի պատրիարքության հետ, որոշում է գործնական քայլեր կատարել և վերջնականապես համաձայնություն է տալիս հիմնելու Կիլիկիո կաթողիկոսության կիրակնօրյա դպրոցներ: Արդեն 1930 թ. հունիսի 28-ին նա հրատարակում է հատուկ կոնդակ՝ նվիրված կիրակնօրյա դպրոցների ստեղծմանը, որտեղ նշված էր. «Մենք չենք կրնար անտեսել Հայաստանեայց Եկեղեցւոյ շուրջ լարուած ընտանի եւ օտար թակարդները, չենք կրնար թոյլ տալ որ հայ մատաղ սերունդը հակակրօն գաղափարներով դաստիարակուի...»[6], ապա խոսելով կիրակնօրյա դպրոցների անհրաժեշտության և դրանց նպատակների մասին՝ ժողովրդին կոչ է անում սատար կանգնել այս կարևոր ձեռնարկին, միաժամանակ հորդորելով. «...անսասանօրէն վստահութիւն ունեցէք ձեր հոգեւոր Հօր և Հայրապետին նախանձայոյզ ոգւոյն առ Մայրենի Եկեղեցւոյ դաւանութիւն, վարդապետութիւն, պաշտամունս և աւանդութիւնս»[7]: Շուտով՝ 1931 թ. սկզբին, Լ. Ձենյանի կողմից մշակվում է կիրակնօրյա դպրոցների կանոնադրությունը՝ 34 հոդվածներով, որը հաստատվում է Սահակ Բ-ի կողմից և ուղարկվում բոլոր թեմեր[8]: Կիրակնօրյա դպրոցների հարցը քննարկվում է նաև 1932 թ. մարտի 8-14-ը Անթիլիսում տեղի ունեցած եպիսկոպոսական ժողովի ժամանակ[9]:

Այսպիսով, նորահաստատ այս ուսումնական կենտրոնները կարևոր դերակատարում էին ունենալու սփյուռքի մատաղ սերնդի բարոյական դաստիարակության և հայապահպանության հարցերում:

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Սահակ Բ-ն Բաբկեն եպիսկոպոսի առաջարկությամբ կիրակնօրյա դպրոցների վարիչ-տնօրեն է նշանակում Լ. Ձենյանին՝ հինգ տարի ժամանակով[10]: Կիրակնօրյա դպրոցների վերատեսուչի աշխատավարձը սկզբնական շրջանում տրամադրվելու էր Համաշխարհային Կիրակնօրյա դպրոցների Ամերիկայի Կենտրոնական վարչության Հյուսիսային Ամերիկայի մասնաճյուղի կողմից[11]: Ստանձնելով նոր պարտականությունը՝ Լ. Ձենյանի առաջին գործն է լինում ուսուցիչներ

[1] Տե՛ս «Սիոն», Երուսաղեմ, թիվ 7, հուլիս, 1929, էջ 218-221:
[2] Նույն տեղում, էջ 220-221:
[3] Նույն տեղում, էջ 220:
[4] Եղիայան Բ., նշվ. աշխ., էջ 434:
[5] Տե՛ս «Սիոն», Երուսաղեմ, թիվ 1, հունվար, 193, էջ 24-28:
[6] «Հասկ», ապրիլ, 1932, թիվ 4:
[7] «Հասկ», մարտ-ապրիլ, 1942, թիվ 3-4, էջ 62:
[8] Տե՛ս նույն տեղում, ապրիլ, 1932, թիվ 4, էջ 19-20, տե՛ս նաև Եղիայան Բ., նշվ. աշխ., էջ 435:
[9] Տե՛ս «Հասկ», ապրիլ, 1932, թիվ 4:
[10] Տե՛ս նույն տեղում:
[11] Տե՛ս «Սիոն», Երուսաղեմ, թիվ 5, մայիս, 1929, էջ 160, նաև «Հասկ», ապրիլ, 1932, թիվ 4:

պատրաստելը: Այդ նպատակով ստեղծվում են վերապատրաստման վեցամսյա դասընթացներ[1], որտեղ հրավիրվում են վերապատրաստվելու Հայկազյան, Կիլիկյան և Կրթասիրած վարժարանների շրջանավարտները[2]: Լ. Ձենյանը կիրակնօրյա դպրոցների վարիչ-տնօրենի պաշտոնը զբաղեցնում է մինչև 1934 թ., այնուհետև մեկնում է Ամերիկա, երկու տարի անց՝ 1936 թ., կրկին հրավիրվելով այդ պաշտոնին, որը վարում է մինչև 1940 թ.՝ «անձնուիրօրէն ... և ձեռնահասօրէն», կարևոր ներդրում ունենալով Կիլիկիո կաթողիկոսության կրթական և դաստիարակչական գործունեության մեջ: Վերջինս, ընտանյոք հանդերձ, 1941 թ. ապրիլին որոշում է տեղափոխվել ԱՄՆ, որտեղ ստանձնում է ՀԲԸՄ Ամերիկյան շրջանային կենտրոնական հանձնաժողովի վարչության տնօրենի պաշտոնը[3]: Լ. Ձենյանին այդ պաշտոնում փոխարինում է ապագա Կիլիկիո կաթողիկոս, այդ ժամանակ երիտասարդ վարդապետ Խորեն Բարոյանը[4]: Մեկ տարի անց վերջինիս այդ պաշտոնում փոխարինում է Տեր Բաբկեն աբեղա Վարժապետյանը մինչև 1946 թ.[5]: 1947-1952 թթ. Լ. Ձենյանը երրորդ անգամ է ստանձնում տնօրեն-վարիչի պարտականությունները[6]:

Կիրակնօրյա դպրոցները կազմակերպելու և ղեկավարելու համար, բացի վարիչ-տնօրենի պաշտոնը, Կիլիկիո կաթողիկոսության յուրաքանչյուր թեմում թեմական առաջնորդի նախագահությամբ ստեղծվում են Կրոնական դաստիարակության խորհուրդներ[7], որի անդամներ էին հանդիսանում թե՛ աշխահիկ և թե՛ հոգևոր գործիչներ[8], ովքեր նշանակվում էին տվյալ թեմի կրոնական ժողովի կողմից[9]: Խորհրդի կազմը բաղկացած էր 5-9 անդամներից, որոնցից յուրաքանչյուրը խորհրդին կարող էր անդամակցել 2-3 տարով[10]: Այս խորհուրդները ստանձնում են կիրակնօրյա դպրոցների հոգաբարձությունը, որոնց պարտականությունն էր աջակցել վարիչ-տնօրենին աշխատանքների արդյունավետ կազմակերպման, անհրաժեշտ նյութական միջոցների հայթայթման, որակյալ ուսուցիչներով դպրոցները ապահովելու հարցերում[11]:

Կիրակնօրյա դպրոցների ուսուցիչների աշխատանքը կազմակերպվում էր կամավորության սկզբունքով, ուսուցչական կազմը բաղկացած էր հիմնականում երիտասարդներից, վերջիններս չէին վարձատրվում և աշխատում էին. «...առանց ոեւէ փոխարինութեան և ոեւէ ակնկալութեան»[12]: Յուրաքանչյուր դպրոց ուներ իր ներքին տեսուչը, քարտուղար-գանձապահը և դպրապետը, ինչպես նաև ուսուցչական ժողովի կողմից ընտրված վարչություն[13]: 1948 թ. սկսած կիրակնօրյա դպրոցների աշխատանքները կազմակերպելու և արդյունավետությունը բարձրացնելու նպատակով պարբերաբար Անթիլիասում կազմակերպվում են խորհրդաժողովներ[14], որոնց ժամանակ ընտրվում են քննարկման հատուկ խնդիրներ, ինչպես օրինակ «Հայաստանեայց եկեղեցին եւ իր մանուկները», «Հայաստանեայց եկեղեցի եւ հայ ընտանիքը»[15] և այլն: Կիրակնօրյա դպրոցները հետագայում ունեցան իրենց լրատուները՝ «Մեր կենաքը» (հրատարակվել է 1950-1956 թթ., 1958 թ.), «Դրազարկ» (հրատարակվել է 1961-1962 թթ.) և այլն: Ունեին իրենց մաղթերգը[16], իսկ նշանաբանն էր աստվածաշնչյան հետևյալ միտքը՝ «Թույլ տուք մանկտւոյդ գալ առ

---

[1] *Տե՛ս Յուշամատեան նուիրուած Կիրակնօրեայ դպրոցներու 35-ամեակին եւ ՀԵԿԴՕՄ-ի 15-ամեակին, 1929-1950-1965, Պեյրութ, 1967, էջ 101:*

[2] *Տե՛ս Ժամխարյան Կ., Կրթամշակութային կյանքը և հայապահպանության խնդիրները Սիրիայի և Լիբանանի հայկական համայնքներում 1920-1930-ական թթ., Ե., 2019, էջ 127:*

[3] *Տե՛ս «Հասկ», նոյեմբեր-դեկտեմբեր, 1941, թիվ 11-12, էջ 176:*

[4] *Տե՛ս Յուշամատեան..., էջ 101-102:*

[5] *Տե՛ս «Հասկ», նոյեմբեր-դեկտեմբեր, 1941, թիվ 11-12, էջ 178:*

[6] *Տե՛ս Յուշամատեան..., էջ 101-102:*

[7] *Տե՛ս Վարժապետյան Բ., Հայ տղուն կրօնական ու ազգային դաստիարակութիւնը, էջ 3; «Հասկ», մարտ-ապրիլ, 1942, թիվ 3-4, էջ 61:*

[8] *Տե՛ս Յուշամատեան..., էջ 105:*

[9] *Տե՛ս «Հասկ», նոյեմբեր-դեկտեմբեր, 1945, թիվ 11-12, էջ 224:*

[10] *Տե՛ս Յուշամատեան..., էջ 114:*

[11] *Տե՛ս նույն տեղում, էջ 114:*

[12] *Վարժապետյան Բ., նշվ. աշխ., էջ 6:*

[13] *Տե՛ս Յուշամատեան..., էջ 106:*

[14] *Տե՛ս Խորհրդակցական ժողով Կիլիկիոյ կաթողիկոսութան կիրակնօրեայ դպրոցներու, Անթիլիաս, 1950, 1954 և այլն:*

[15] *Տե՛ս Յուշամատեան..., էջ 119:*

[16] *Տե՛ս նույն տեղում, էջ 119, 123:*

զիս, եւ մի արգելուք զդոսա» (Մարկ.Ժ.14)[1]: Այս դպրոցների միակ նպատակն էր «...հայ մանկան տալ հոգեւոր կեանք, ազգային և եկեղեցական ինքնաճանաչում, քրիստոնէական դաստիարակություն՝ համաձայն Հայոց Ս. Եկեղեցւոյ, բարոյական ու տիպար նկարագիր»[2]: Ուստի կիրակնօրյա դպրոցների կազմակերպիչները գտնում էին, որ «...հայ ու մանաւանդ օտար վարժարաններ յաճախող մեր տղաք որպէսզի իսկապէս ըմբռնեն և իր էութեան մէջ ճանչնան թէ հայ են... պէտք է խորապէս ճանչնայ այն ժողովուրդը որուն զաւակն է ինք, ճանչնայ զայն իր անցեալի փառքն, արժանիքներուն մէջ, ճանչնայ անոր ստեղծագործութիւնը և այսօր մեզի մնացած ժառանգութիւնը. Հայ տղան պէտք է ճանչայ **նաեւ մեր թերի կողմերը և այսօրուան թերութիւնները** (ընդգծումը մերն է Է.Հ.)»[3]: Խիստ կարևոր հանգամանք էր, որ ի սկզբանե նպատակ էր դրվում ոչ միայն գովաբանել սեփական անցյալը, այլև վեր հանել թերացումներն ու սխալները, որոնց գիտակցումը միայն կարող էր մատաղ սերնդին հնարավորություն տալ խուսափելու հետագայում նույն սխալները կրկնելուց: Կիրակնօրյա դպրոցների ուսումնական ծրագրերը իրականացվում էին երկու ձևով. «1. *Լսարանական մեթոտը*, որը դպրոցին ընդհանուր աշակերտութեան համար կըլլայ: 2. *Դասարանականը*, որ իւրաքանչիւր ուսուցիչ իր դասարանին հետ է»[4]: Լսարանային ծրագիրը տևում էր մեկ ժամ և նախատեսված էր ընդհանուր աշակերտության համար, իսկ դասարանային ծրագիրը՝ 35 րոպե, որի ընթացքում աշակերտները բաժանվում էին առանձին խմբերի, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր ուսուցիչը, որը ուսուցանում էր «մասնաւոր կրթական ծրագրով» նախատեսված օրվա դասը[5]: Կիրակնօրյա դպրոցներ էին հաճախում 5-17 տարեկան երկսեռ աշակերտներ, որոնք 10-12 տարի կանոնավոր հաճախելու դեպքում ստանում էին վկայականներ: Աշակերտները տարիքային սկզբունքով բաժանված էին 5 խմբերի՝ սկսնակ, կրտսեր, միջին, երեց և ավագ[6]:

Կիրակնօրյա դպրոցներում աշակերտները ուսումնասիրում էին Աստվածաշունչ, սովորում աղոթքներ, շարականներ, հոգևոր երգեր, ինչպես նաև բարոյագիտություն և Հայոց եկեղեցու պատմություն: Կիրակնօրյա դպրոցների համար կաթողիկոսարանի կողմից «իւրաքանչիւր դասարանի տարիքին յարմար» տպագրվում են դասագրքեր: Դասագրքերը բաժանված էին երեք տարիքային խմբերի համար՝ ավագ խումբ՝ 15-17 տարեկաններ, միջին խումբ՝ 12-14 տարեկաններ և կրտսեր խումբ՝ 6-10 տարեկաններ[7]: Դասերը սովորաբար անցկացվում էին կիրակի օրերին եկեղեցիներում, երբեմն դպրոցների շենքերում՝ մեկ ու կես ժամ տևողությամբ:

Անթիլիասը սփյուռքյան նոր սերնդի կրոնական դաստիարակության հարցը արդյունավետ կազմակերպելու նպատակով ձեռնարկել էր հրատարակությունների շարք «Կրօնական Մատենադարան» ընդհանուր վերնագրով, որի շրջանակներում տաս տարվա ընթացքում հրատարակվեցին 16 «կրօնաբարոյական, ազգաշունչ, շինիչ և կրթիչ» բնույթի աշխատություններ[8]: Այդ աշխատությունները որպես դասագրքեր և ձեռնարկները օգտագործվում էին կիրակնօրյա դպրոցներում, դրանց թվում հիշատակելի են Բաբկեն վեհափառի «Քրիստոնէականը», Բյուզանդ Եղիայանի «Կրօնք և Կեանք» աշխատությունը, Գ.Սարաֆյանի «Հին և նոր Ուխտի պատմությունները», տեր և տիկին Զենյանների՝ կրտսեր տարիքի երեխաների համար նախատեսված ուղեցույցները[9] և այլն: Ուսուցման ընթացքում կիրառվում էին նաև դիդակտիկ նյութեր, գունազարդ նկարներ[10] և այլն:

---

[1] *Տե՛ս նույն տեղում, էջ 102:*
[2] *«Հասկ», մարտ-ապրիլ, 1942, թիվ 3-4, էջ 60:*
[3] *Նույն տեղում, էջ 60:*
[4] *Նույն տեղում, էջ 61; տե՛ս նաև «Տարեկան ուղեցոյց-ծրագիր կիրակնօրեայ դպրոցներու», Անթիլիաս, 1979, էջ 7:*
[5] *Տե՛ս Յուշամատեան..., էջ 107:*
[6] *Տե՛ս նույն տեղում, էջ 108:*
[7] *Տե՛ս «Հասկ», մարտ-ապրիլ, 1942, թիվ 3-4, էջ 62:*
[8] *Տե՛ս նույն տեղում, մարտ-ապրիլ, 1941, թիվ 3-4 էջ 52:*
[9] *Տե՛ս Վարժապետյան Բ., նշվ. աշխ., էջ 5-6; «Հասկ», մարտ-ապրիլ, 1942, թիվ 3-4, էջ 62:*
[10] *Տե՛ս Վարժապետյան Բ., նշվ. աշխ., էջ 5-6:*

«...Հայ ժողովուրդին զավակները պէտք է դաստիրակուին իրենց Մայրենի Եկեղեցւոյն մէջ»[1],– սա էր Կիլիկիո կաթողիկոսության համոզմունքը: Ինչպես որ ավանդաբար եղել է նախկինում, այս շրջանում ևս Հայոց եկեղեցին, այս դեպքում ի դեմս Կիլիկիո Աթոռի, գտնում էր, որ եկեղեցու գործը միայն համայնքի կրոնական պետքերը հոգալը չէ: Եկեղեցին իր խնդիրն էր համարում նաև սերնդի դաստիարակության հարցը: Ուստի անչափ կարևոր համարելով այդ դպրոցների նշանակությունը, դրանց պահպանման և տարածման ուղղությամբ Անթիլիասն անում էր հնարավոր ամեն ինչ, որի արդյունքում դպրոցները պահվում էին «...ի գին ամէն զոհողութեանց՝ յօգուտ հայ մանուկին ազգային, եկեղեցական ու բարոյական շինութեան համար»[2]: Եվ իրապես այս հաստատությունների գլխավոր նպատակը, բացի զուտ կրոնական դաստիարակություն տալը, հայ մանուկներին ձուլման վտանգից փրկելն էր. «...Կիրակնօրեայ դպրոցներով հայկական «Քէմբ»երու մէջ հայ տղաքը ոչ քրիստոնեայ շրջանակներէն, օտար վարժարաններէն կը վերցնէ ու հայ եկեղեցւոյ հովանւոյն ներքեւ կը խմբէ զանոնք ու այդ եկեղցւոյն հարազատ զաւակներէն կազմուած ուսուցչական խումբ մը, անձնուիրաբար կաշխատե, կը տաշէ զանոնք, այդ անտաշ կտորներէն տիպար հայ քրիստոնեայ մը, մեր Ս.Եկեղեցւոյն գիտակից և հոգեւոր անդամ մը պատրաստելու համար», և այս ամենի արդյունքում հայ մանուկները պետք է «պաշտպանուին... մեղքի խորշակէն և ուծացումից, դաւանափոխութեան ցուրտէն»[3],– գրում է Անթիլիասի պաշտոնաթերթը: Սահակ կաթողիկոսը, դիմելով սփյուռքահայությանը, հորդորում էր. «Կը յայտարարեմ եւ կը հրամայեմ որդեսէր ծնողաց, որ առանց խարբալուելու առտնին եւ հրապարակային ասուլիսներէն, հոգ ու խնամք տանին իրենց զաւակաց բարք ու բարոյականին, հոգածու ըլլան կրօնական եւ եկեղեցասիրական ոգին վառ պահելու Կիրակնօրեայ Դպրոցով»[4]:

Այսպիսով, կիրակնօրյա դպրոցների գործունեության գլխավոր նպատակ էր հռչակվել.

«1. Հայաստանեայց եկեղեցւոյ դաւանութեան եւ աւանդութեան համաձայն կրօնական դաստիարակութիւն ջամբել մասնաւորաբար մեր մանուկներուն եւ պատանիներուն, իբրեւ լրացուցիչ մասը ազգային ընդհանուր կրթութեան եւ դաստիարակութեան, եւ ընդհանրապէս ալ չափահասներուն աւանդել Քրիստոնեութեան եւ Մայրենի եկեղցւոյ վերաբերեալ գիտելիքներ եւ ծանօթութիւններ:

2. ...հայ ժողովուրդին զաւակները գիտակից դարձնել իրենց Քրիստոնէական Կրօնքին եւ Մայրենի Եկեղեցւոյն եւ կերտել անունց քաղաքացիական նկարագիրը»[5]:

Փաստորեն Կիրակնօրյա դպրոցների գլխավոր նպատակը մեկն էր «...հայ մանկան տալ հոգեւոր կենաք, ազգային և եկեղեցական ինքնաճանաչում, քրիստոնէական դաստիարակութիւն համաձայն Հայոց Ս.Եկեղեցւոյ, բարոյական ու տիպար նկարագրի»[6]:

Կիրայնօրյա դպրոցները, բացի կաթողիկոսարան տրամադրած միջոցներից, պահվում էին նաև բարերարների տրամադրած միջոցներով: Մեծ օգնություն էր հատկապես Ամերիկայից ուղարկում այդ դպրոցների նախկին տեսուչ Լ. Ձենյանը, որը հաստատվել էր ԱՄՆ-ում և նրա ջանքեր շնորհիվ պարբերաբար այդ երկրում կազմակերպվում էին հանգանակություններ ի նպաստ կիրակնօրյա դպրոցների[7]:

Հետագայում՝ 1950 թ., Բեյրութում Լ. Ձենյանի նախաձեռնությամբ կիրակնօրյա դպրոցների գործունեությունը անհրաժեշտ միջոցներով ապահովելու համար ստեղծվում է նոր մարմին՝ «Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու Օժանդակ Մարմինը» (ՀԵԿԴՕՄ)[8]: Սակայն գործունեության առաջին տարիներին Անթիլիասը զրկված էր նման հնարավորությունից, ուստի ստիպված էր սեփական ջանքերով փնտրել այդ դպրոցների ապահովման միջոցները: Այս կառույցը անչափ կարևոր դերակատարում է ունենում կիրակնօրյա դպրոցների կյանքում: Այս կազմակերպության նախագահն էր հանդիսանում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսը:

---

[1] Տե՛ս «Հասկ», ապրիլ, 1932, թիվ 4:
[2] Նույն տեղում, հունվար-փետրվար, 1942, թիվ 1-2, էջ 30:
[3] Նույն տեղում, մարտ-ապրիլ, 1941, թիվ 3-4 էջ 41:
[4] Յուշամատեան..., էջ 91:
[5] Տե՛ս նույն տեղում, էջ 104:
[6] Վարժապետյան Բ., նշվ. աշխ., էջ 2:
[7] Տե՛ս «Հասկ», հուլիս-օգոստոս, 1942, թիվ 7-8, էջ 123:
[8] Յուշամատեան..., էջ 7-8, 125:

Կիրակնօրյա դպրոցների դերը կարևորում էին նաև սփյուռքյան ազգային իշխանությունները: 1944 թ. Ազգային կենտրոնական վարչությունը հրահանգում է, որ Անթիլիասի չորս թեմերում. «...անհրաժեշտ դիւրութիւնները տրուին Կիրակնօրեայ Դպրոցներու... հարթելու ուեւէ դժվարութիւն անոնց առջեւ...Անհրաժեշտ է որ Պատ. Թաղական եւ Հոգաբարձու մարմինները դժվարութիւն չտալէ զատ՝ հարկ եղած օժանդակութիւնը բերեն սոյն կրթական եւ կրօնական վարժարաններուն...»[1]:

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես արդեն նշվել է, առաջին կիրակնօրյա դպրոցը բացվում է 1929 թ. Հալեպում[2], որից հետո դրանք տարածվում են բոլոր թեմերում: Առաջին կիրակնօրյա դպրոցները հիմնվում են Հալեպի և Անտիոքի թեմերում, որում մեծ դեր են խաղում այդ թեմերի առաջնորդներ Արտավազդ և Խադ արքեպիսկոպոսները[3]: Մեկուկես տասնամյակ անց Հալեպի կիրակնօրյա դպրոց հաճախող աշակերտների թիվը անցնում էր 1000-ը[4]: Ամենամարդաշատը Հալեպի Նոր գյուղ թաղամասի Ս. Գևորգ եկեղեցում գործող կիրակնօրյա դպրոցն էր, որի աշակերտների թիվը 1940-ական թթ. կեսերին մոտենում էր 500-ի[5]: Կիրակնօրյան դպրոցներ են բացվում նաև Հալեպի թեմի գյուղական բնակավայրերում: Ստորև ներկայացված աղուսակը ցույց է տալի Հալեպի թեմի կիրակնօրյա դպրոցների տարածվածությունը 1930-ական թթ.[6]:

	դպրոց	ուսուցիչ	աշակերտ
1.	Հալեպ	20	250
2.	Տավուդիե	9	175
3.	Նոր Գյուղ	20	350
4.	Գերմանիկ (Մեյդան)	5	160
5.	Սեպիլ	8	75
6.	Դեր-Զոր	5	30
7.	Ազեզ	5	90
8.	Հոմս	4	80
9.	Եաղուպիե	3	40
10.	Սեյիմիե	1	35
11.	Աֆրին	3	50
12.	Մեյդան Էֆքեզ		30
13.	Նոր-Մարաշ	23	250
14.	Կիլիկեան	7	100
15.	Տորա	5	50
16.	Նոր-Ադանա	5	50
17.	Սին-Էլ-Ֆիլ	3	80
18.	Ռըմեյլ	10	110
19.	Նոր-Հաճն	16	175
20.	Թիրո	11	200
21.	Ամանոս	11	150
22.	Սուր	4	160
23.	Ռաս-Էլ-Այն	4	140
24.	Ճունի	3	60
25.	Ճիպեյլ	2	30
26.	Տրիպոլի (Մինա)	7	104

[1] *«Հասկ», մայիս-հունիս-հուլիս, 1944, թիվ 5-6-7, էջ 98:*

[2] *Տե՛ս «Հասկ», մարտ-ապրիլ, 1942, թիվ 3-4, էջ 61:*

[3] *Տե՛ս Վարժապետյան Բ., նշվ. աշխ., էջ 3:*

[4] *Տե՛ս «Հասկ», նոյեմբեր-դեկտեմբեր, 1945, թիվ 11-12, էջ 224:*

[5] *Տե՛ս նույն տեղում, մարտ-ապրիլ, 1945, թիվ 3-4, էջ 131, նոյեմբեր-դեկտեմբեր, 1945, թիվ 11-12, էջ 224:*

[6] *Աղյուսակը ըստ Վարժապետյան Բ., Հայ տղուն կրօնական ու ազգային դաստիարակութիւնը, գրքույթի, էջ 4, հրատարակության տեղն ու թիվը նշված չեն:*

Լիբանանի թեմում առաջին կիրկնօրյա դպրոցները ստեղծվում են միայն 1939 թ. Մարաշի Ս. Քառասունից Մանկաց եկեղեցուն կից[1]: Շուտով Բեյրութի կիրակնօրյա դպրոցների թիվը հասնում է 11-ի՝ շուրջ 2000 աշակերտներով[2]: Լիբանանի թեմում այդ դպրոցների թիվը 1940-ական թթ. սկզբներին հասնում է 16-ի[3]:

Կիրակնօրյա դպրոցների ցանցը տարեցտարի ընդլայնվում էր՝ ընդգրկելով նորանոր հայկական համայնքներ: Նմանատիպ դպրոցներ են բացվում Ազեզում, Թարապլուսում[4], Ձահլեյում, Էշրեֆիեում[5], Տրիպոլիում, Սուրում, Ձահլեում[6] և այլուր: Սակայն պետք է նշել, որ գյուղական վայրերում գործող կիրակնօրյա դպրոցները «...քաղաքի դպրոցներուն նման կազմակերպուած չեն և խնամքի բաւական պէտք ունին»[7]:

1942 թ. սկզբներին առաջին կիրակնօրյա դպրոցն է հիմնվում նաև Կիպրոսի թեմում՝ Նիկոսիայում, Խորեն քահանա Գուլիկյանի ջանքերով[8]: Կարճ ժամանակ անց այստեղ հաճախող հայ աշակերտների թիվը գերազանցում է 200-ը[9]:

1940-ական թվականների սկզբներին Սիրիայում և Լիբանանում Անթիլիասի հովանու ներքո գործում էր շուրջ 30 կիրակնօրյա դպրոց, որտեղ հաճախում էր 3227 աշակերտ, իսկ այդ դպրոցներում աշխատող ուսուցչների թիվը, բացի տեսուչները, անցնում էր 200-ը[10]: Հետագա տասնամյակներում կիրակնօրյա դպրոցների թիվն ավելանում է և հասնում 55-ի՝ 450 ուսուցիչներով և 7000 աշակերտներով[11]:

Ստեղծումից ի վեր Անթիլիասի կիրակնօրյա դպրոցները խիստ կարևոր դերակատարում ունեցան Մերձավոր Արևելքի հայկական համայնքներում հայապահպանության և մատաղ սերնդի հայեցի ու բարոյական դաստիարակության հարցերում: Ստեղծման առաջին իսկ օրերից դրանց գործունեությունը դրական գնահատականի արժանացավ հայկական հասարակական շրջանակների կողմից: Երուսաղեմի պատրիարքությունը բազմիցս իր գոհունակությունն ու երախտիքի խոսքն էր հղում դրա կազմակերպիչներին՝ խիստ կարևորելով այդ դպրոցների դերակատարումը ոչ միայն զուտ կրոնական դաստիարակության տեսանկյունից, այլև հայապահպանության առումով[12]: Պետք է նշել, որ առանձին դեպքերում կիրակնօրյա դպրոցներն ունեին նաև ընդդիմախոսներ, որոնք երբեմն քննադատական հոդվածներով էին հանդես գալիս նրանց գործունեության դեմ[13]: Նման քննադատություններին, բնականաբար, անձագանքում էր Անթիլիասը՝ բերելով իր փաստարկները[14]:

«Անտեսել Կիրակնօրեայ դպրոցները, կը նշանակէ արմատէն հետզհետէ չորցնել Եկեղեցին եւ Ս.Գրքի ընթերցումը. Ուստի անհրաժեշտ են Կիրակնօրեայ դպրոցները մեր մատաղ սերունդի կրօնական եւ բարոյական դաստիարակութեան համար»[15],– այսպես է ընդգծում այդ դպրոցների դերը Հալեպի կիրակնօրյա դպրոցների քարտուղար Գևորգ Ներսոյան: Կիրակնօրյա դպրոցների երկարամյա վարիչ-տնօրեն Լ. Ձենյանի դիպուկ բնորոշմամբ՝ «Կիրակնօրեայ դպրոցները հաստատութիւն մըն են, որոնք ոչ թէ շատ սորվեցնելու, այլ ազգային հիւանդութիւնները դարմանելու

---

[1] Տե՛ս Յուշամատեան..., 1967, էջ 101, նաև Վարժապետյան Ս., Հայերը Լիբանանի մէջ, հ. Բ, Պեյրութ, 1981, էջ 459:

[2] Տե՛ս «Հասկ», նոյեմբեր-դեկտեմբեր, 1945, թիվ 11-12, էջ 223:

[3] Տե՛ս Վարժապետյան Բ., նշվ. աշխ., էջ 4:

[4] Տե՛ս «Արև», թիվ 3833, սեպտեմբերի 3, 1931:

[5] Տե՛ս «Հասկ», հունվար-փետրվար, 1943, թիվ 1-2, էջ 192:

[6] Տե՛ս նույն տեղում, նոյեմբեր-դեկտեմբեր, 1945, թիվ 11-12, էջ 223:

[7] Նույն տեղում, էջ 225:

[8] Տե՛ս նույն տեղում, մայիս-հունիս, 1942, թիվ 5-6, էջ 96:

[9] Տե՛ս նույն տեղում, հունվար-փետրվար, 1943, թիվ 1-2, էջ 192:

[10] Տե՛ս նույն տեղում, մարտ-ապրիլ, 1942, թիվ 3-4, էջ 61:

[11] Տե՛ս Յուշամատեան..., էջ 111-118; տե՛ս նաև Եղիայան Բ., նշվ. աշխ., էջ 435:

[12] Տե՛ս «Սիոն», Երուսաղեմ, թիվ 2, փետրվար, 1932, էջ 33-37; թիվ 3, մարտ, էջ 65-70:

[13] Տե՛ս Եղիայան Բ., նշվ. աշխ., էջ 432; te6s նաև «Ձարթոնք», Բեյրութ, 4 մայիսի, թիվ 1227, 1944:

[14] Տե՛ս «Հասկ», մայիս-հունիս-հուլիս, 1944, թիվ 5-6-7, էջ 99:

[15] Յուշամատեան..., էջ 27:

կը միտին...»[1]: Այս սկզբունքով առաջնորդվելով՝ Մեծի ՏԱՆն Կիլիկիո կաթողիկոսության կիրակնօրյա դպրոցները իրենց հայապահպան առաքելությունը կատարում են մինչ օրս[2]:

Эдгар Ованесян, СОЗДАНИЕ ВОСКРЕСНЫХ ШКОЛ КИЛИКИЙСКОГО КАТОЛИКОСАТА И ИХ РОЛЬ В СОХРАНЕНИИ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ. Киликийский Католикосат выполнял важную миссию по сохранению армянской идентичности и моральному воспитанию молодого поколения армянских общин Сирии и Ливана. С этой целью Католикосат создал воскресные школы. С разрешения Киликийского католикоса Саака II первая воскресная школа была основана в Алеппо в 1929 году. В последующие десятилетия воскресные школы действовали во всех епархиях Киликийского Католикосата. Их число достигло нескольких десятков. Чрезвычайно важную роль в этом процессе сыграл Левон Зенян, уполномоченный по воскресным школам. С момента своего создания воскресные школы играли чрезвычайно важную роль в сохранении национальной идентичности в армянских общинах Ближнего Востока. Эти школы до сих пор активно действуют во многих общинах армянской диаспоры.

Ключевые слова: *Киликийский Католикосат, воскресные школы, армянская диаспора, армянские общины Сирии и Ливана, сохранение армянской идентичности, образование.*

Edgar Hovhannisyan, THE FOUNDATION OF SUNDAY SCHOOLS OF THE CATHOLICOSATE OF THE GREAT HOUSE OF CILICIA AND THEIR ROLE IN PRESERVATION OF THE ARMENIAN IDENTITY. The Catholicosate of the Great House of Cilicia had an important mission in preserving the Armenian identity and providing moral upbringing for the young generation of Armenian communities of Syria and Lebanon. For that purpose, Catholicosate has established Sunday schools. By permission of Sahak II, Catholicos of Cilicia, the first Sunday school was established in Aleppo in 1929. In the following decades, Sunday schools were spread to all dioceses of the Catholicosate of Cilicia. Their number reached several dozen. Levon Zenyan, the first inspector of the Sunday schools, played a crucial role in this process. Since their establishment, Sunday schools have played an extremely important role in preserving national identity in the Armenian communities of the Middle East. These schools are still operating actively in many communities of the Armenian Diaspora.

Key words: *The Catholicosate of the Great House of Cilicia, Sunday schools, Armenian Diaspora, Armenian communities of Syria-Lebanon, preservation of the Armenian identity, education*.

[1] *Նույն տեղում, էջ 27:*
[2] *Տե՛ս Հարությունյան Ն., նշվ. աշխ., էջ 59:*